Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Արկադի Պապոյան, Սմբատ Գոգյան, Վարդան Սահակյան, Ռուբեն Թոփչյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   Սմբատ Գոգյան - ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահ,

   Արկադի Պապոյան - ՀՀ ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ,

   Վարդան Սահակյան - ՀՀ ԿԳՄՍ նախարարության գիտության կոմիտեի նախագահի տեղակալ,

   Ռուբեն Թոփչյան - «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա,

   2019 թվականի հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 1-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   ՌԴ բարձրագույն կրթության և գիտության նախարարություն:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

2019 թվականի ապրիլի 3-4-ը Մոսկվայում կայացած Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական 19-րդ նիստի շրջանակներում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանի և ՌԴ բարձրագույն կրթության և գիտության նախարար Միխայիլ Կոտյուկովի միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն ստեղծել փորձագիտական խմբեր՝

քննարկելու բարձրագույն կրթության և գիտության բնագավառներում երկկողմ համագործակցության զարգացման հնարավորությունները:

6. **Քննարկված թեմաները.**

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական 19-րդ նիստի արձանագրության 12-րդ կետի դրույթների իրագործմանն ուղղված աշխատանքների կազմակերպում,

բարձրագույն կրթության և գիտության բնագավառներում համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորություններ,

բաձրագույն կրթության որակի ապահովման խնդիրներ և միջազգային հավատարմագրում,

բարձրագույն կրթության և գիտության բնագավառներում հայ-ռուսական համագործակցության զարգացմանն ուղղված ծրագրային նոր ուղղություններ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հայաստանի պատվիրակության հետ հանդիպմանը և քննարկմանը մասնակցել են ՌԴ բարձրագույն կրթության և գիտության նախարարության հետևյալ ներկայացուցիչները.

- Իգոր Գանշին Դեպարտամենտի տնօրեն,
- Ալեքսանդր Բաբիչ Դեպարտամենտի տնօրենի տեղակալ,
- Օքսանա Սոկոլովսկայա Բաժնի պետ,
- Յուլիա Սայապինա Բաժնի պետի տեղակալ,
- Նատալիա Զախարյևա Բաժնի պետի տեղակալ,
- Վլադլեն Մեդվեդեվ Բաժնի պետի տեղակալ,
- Մարինա Կաչյան Գլխավոր մասնագետ:

Անցկացվել են բարձրագույն կրթության և գիտության բնագավառներում հայ-ռուսական համագործակցության փորձագիտական խորհրդակցություններ, ինչպես նաև քննարկվել են երկկողմ համագործակցության զարգացմանն ուղղված ծրագրային մի շարք առաջարկություններ: Մասնավորապես, առաջարկվել է դիտարկել համագործակցություն հետևյալ ուղղություններով՝

- Բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում համատեղ ծրագրերի իրականացում: Այն կներառի որոշ գործընթացների ներդաշնակեցում և փորձագետների փոխանակում՝ հետագայում դիտարկելով նրանց ընդգրկումը կրթության որակի համատեղ գնահատման փորձագիտական խմբերում: Նման գործընթացների կազմակերպման համակարգային մոտեցումը հնարավորություն կընձեռի կատարելագործելու բարձրագույն կրթության որակի ապահովման չափանիշները:
- Համատեղ գիտական և տեխնոլոգիական կենտրոնների կամ մոդելների ստեղծման հնարավորություն և փոխադարձության սկզբունքով ներգրավել նաև երիտասարդ գիտնականների:
- Միջբուհական համագործակցության զարգացում՝ ուսանողների, գիտնականների, հետազոտողների և դասավանդողների կարճաժամկետ փոխանակման ծրագրերի իրականացմամբ, որը կստեղծի նաև նոր հնարավորություններ համատեղ նախաձեռնություններ իրականացնելու համար:
- Հանձնաժողովի կամ խորհրդի ստեղծում համատեղ իրականացվող գիտական և հետազոտական ծրագրերը համակարգելու նպատակով:
- Գիտական աշխատությունների համընդհանուր բազաների ներդաշնակեցման հնարավորություն:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

   Քննարկումների արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն մեկամսյա ժամկետում ստեղծել աշխատանքային խմբեր և միմյանց փոխանցել դրանց անհատական կազմերը: Համատեղ ստեղծված աշխատանքային խմբերը՝ հիմք ընդունելով վերոնշյալ քննարկումների արդյունքները, կմշակեն միջնաժամկետ հատվածի ճանապարհային քարտեզի նախագիծ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Ճանապարհային քարտեզի նախագիծը նախատեսվում է ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանի և ՌԴ բարձրագույն կրթության և գիտության նախարար Միխայիլ Կոտյուկովի ստորագրմանը: Միաժամանակ, համատեղ մշակված ճանապարհային քարտեզը հետագայում հիմք կհանդիսանա բարձրագույն կրթության և գիտության բնագավառներում հայ-ռուսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովների նիստերի օրակարգային հարցերը հստակեցնելու և համապատասխան առաջարկություններ ներկայացնելու համար:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Արկադի Պապոյան, Սմբատ Գոգյան, Վարդան Սահակյան, Ռուբեն Թոփչյան

6.11.2019թ.